



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

« _____ 2013թ.

N _____

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ,
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՊԱՐՈՆ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գևորգյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի N 800-Ն որոշման N1 հավելվածի 89-րդ կետի, ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման 3-րդ կետի 3)-րդ ենթակետի՝ Ձեր քննարկմանն է ներկայացվում «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակված, ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը (փաթեթով), որոնցում հաշվի են առնվել ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման համաձայն իրականացվող ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձական ծրագրի արդյունքները, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը:

Խնդրում եմ ներկայացնել Ձեր դիտողություններն ու առաջարկությունները:
Կից՝ 33 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

կատ սոցիալական աջակցության վարչություն
հեռ. 56 02 52

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է սոցիալական աջակցության հասկացությունը, կազմակերպման և տրամադրման սկզբունքներն ու կարգը, ֆինանսավորման աղբյուրները, սոցիալական աջակցության կառավարման համակարգը:

ՀՈԴՎԱԾ 2. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) կյանքի դժվարին իրավիճակ՝ հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կան այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող.

2) սոցիալական աջակցություն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, ընտանիքին, սոցիալական խմբին կյանքի դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու, նրանց հիմնական պահանջմունքները բավարարելու, հասարակության մեջ ինտեգրվելու, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու նպատակով տրամադրվող սոցիալական ծառայությունների համալիր.

3) հիմնական պահանջմունքներ՝ ֆիզիկական անձի կեցության համար անհրաժեշտ նվազագույն պայմանների (սնունդ, հագուստ, կացարան, բուժօգնություն, հիմնական ընդհանուր կրթություն, բնակարանային կոմունալ ծառայություններ) ամբողջություն.

4) տարեց՝ ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքը լրացրած անձ.

5) անօթևան՝ որոշակի բնակության վայր չունեցող անձ.

6) բռնություն՝ անձի ֆիզիկական և (կամ) հոգեկան և (կամ) սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված արարք կամ դրա սպառնալիք.

7) ընտանիք՝ միևնույն բնակության վայրում փաստացի բնակվող անձանց սոցիալական փոքր խումբ, որի անդամները կապված են ազգակցական, արյունակցական կամ խնամհական կապերով, վարում են ընդհանուր տնտեսություն և ունեն ընդհանուր բյուջե, ինչպես նաև միայնակ բնակվող քաղաքացի,

8) ընտանեկան բռնություն՝ ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական, սեռական, հոգեբանական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառում կամ տնտեսական միջոցներից զրկում.

9) նախնական նույնացում՝ ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառման միջոցով «ենթադրյալ» ընտանեկան բռնության կամ թրաֆիքինգի ենթարկված անձի հայտնաբերում.

10) սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ (այսուհետ՝ տարածքային մարմին)՝ պետական մարմին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում, որն իր սպասարկման տարածքում բնակչությանը տրամադրում է օրենքով նախատեսված սոցիալական ծառայություններ, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությանը կամ նրանց՝ նման իրավիճակում հայտնվելու կանխարգելմանն ուղղված սոցիալական ծառայությունները.

11) սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններ (անկախ կազմակերպական-իրավական ձևից, այսուհետ՝ կազմակերպություն)՝ սույն օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությանը կամ նրանց՝ նման իրավիճակում հայտնվելու կանխարգելմանն ուղղված գործողությունների իրականացմամբ ձևավորված սոցիալական ծառայությունը՝ դրա կարիքն ունեցողին մատուցող կազմակերպություն.

12) սոցիալական ծառայություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տրամադրվող ծառայություններ և իրականացվող միջոցառումներ՝ ուղղված անձանց, ընտանիքի կամ սոցիալական խմբերի սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-իրավական կարիքներից ցանկացածի բավարարմանը և բնականոն կենսագործունեության ապահովմանը, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու և (կամ) դրա կանխարգելմանը

13) ինտեգրված սոցիալական ծառայություններ՝ անձի սոցիալական կարիքների համալիր գնահատման հիման վրա՝ տրամադրվող տարատեսակ սոցիալական ծառայությունների ամբողջություն.

14) համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն (այսուհետ՝ համալիր կենտրոն)՝ մեկ պատուհանի սկզբունքով գործող՝ դրամական վճարներ տրամադրելու, սոցիալական ծառայությունների տրամադրումը կազմակերպելու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմինների գտնվելու վայր, որում տեղակայված մարմինները համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմնի սպասարկման տարածքում բնակչությանը տրամադրում են օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված սոցիալական ծառայություններ.

15) աջակցող ցանց՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխգործակցության, համատեղ գործունեության համակարգ՝ ուղղված անձանց, անձանց որոշակի խմբերի և ընտանիքների իրավունքների պաշտպանությանն ու իրականացմանը, օրինական շահերի և ազատությունների ապահովմանը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան սոցիալական ծառայությունների կազմակերպման և տրամադրման միջոցով:

16) սոցիալական դեպք՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի) մոտ մեկ կամ միմյանց հետ փոխկապակցված տարբեր սոցիալական կարիքների ամբողջությամբ պայմանավորված օբյեկտիվ իրավիճակ:

17) սոցիալական դեպքի վարում՝ համագործակցության և հասանելի ռեսուրսների որոնման միջոցով իրականացվող գործընթաց, որում միավորվում են անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատումը, սոցիալական աջակցություն ստացողների կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի ծրագրավորումը, դրանք ստանալու հարցում աջակցությունը, նպատակ ունենալով բարելավել սոցիալական աջակցություն ստացողի կենսապայմանները:

18) անհատական սոցիալական ծրագիր (այսուհետ՝ անհատական ծրագիր)՝ սոցիալական դեպքի վարման արդյունքներով կազմված ծրագիր, որում ներառվում են սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տեսակներն իրենց տրամադրման ժամկետով, ակնկալվող արդյունքով, ինչպես նաև սոցիալական դեպքի շարունակական հսկողության ժամանակացույցը:

ՀՈԴՎԱԾ 3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, իրավական այլ ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՈԴՎԱԾ 4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. Սոցիալական աջակցության հիմնական նպատակն է բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջմունքները, խմբի, ընտանիքի, համայնքի բնակչության սոցիալական կարիքները, ստեղծել պայմաններ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հասարակության մեջ ինտեգրվելու համար, խթանել նրանց ինքնօգնության և ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանն ու ինքնորոշմանը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը, ինչպես նաև օժանդակել նրանց սոցիալական խնդիրների լուծմանը:

ՀՈԴՎԱԾ 5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Սոցիալական աջակցության կազմակերպման և տրամադրման հիմնական սկզբունքներն են՝

1) երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթությունը՝ սոցիալական ծառայություններ տրամադրելիս երեխաներին նախապատվություն տալը.

2) մարդու իրավունքների պաշտպանությունը և մարդու արժանապատվությունը հարգելը.

3) հասցեականությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրումը իսկապես դրա կարիքն ունեցող անձին.

4) համագործակցությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրումը աջակցող ցանցի անդամների համագործակցության հիման վրա.

5) մատչելիությունը՝ սոցիալական ծառայություններ ստանալու հասանելիության ապահովումը.

6) համարժեքությունը և շարունակականության ապահովումը՝ անձի պահանջմունքներին առավել համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրումը, դրանց շարունակականության ապահովումը.

7) համալիրությունը՝ տարատեսակ սոցիալական ծառայությունների զուգակցված տրամադրումը.

8) թափանցիկությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հասանելի լինելը հասարակության համար.

9) սոցիալական խնամառության բացառելը՝ անձի ակտիվության դրսևորման և ինքնօգնության ունակությունների զարգացումը սոցիալական աջակցությունից շարունակական կախվածությունը բացառելու համար.

10) կանխարգելելը՝ սոցիալական այն խնդիրների վերհանումը, որոնք կարող են առաջացնել կյանքի դժվարին իրավիճակ և դրանց կանխմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

11) խտրական վերաբերմունքի բացառելը՝ տարբեր կատեգորիայի անձանց նկատմամբ հավասար վերաբերմունք ցույց տալը.

12) խորհրդապահությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրման ժամանակ հայտնի դարձած անհատական տվյալների չհրապարակելը:

ՀՈԴՎԱԾ 6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Սոցիալական աջակցության իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացի) օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

ԳԼՈՒԽ 2
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 7.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

1. Սոցիալական ծառայությունները դասակարգվում են ըստ.

1) տրամադրման ձևի.

2) տրամադրման գործընթացի կազմակերպման մեխանիզմների:

2. Սոցիալական ծառայություններն ըստ տրամադրման ձևի դասակարգվում են.

1) ուղղակի տրամադրվող սոցիալական ծառայություններ, որոնք լինում են.

ա. անհատական սոցիալական ծառայություններ, որոնք տրամադրվում են անձին՝ վերջինիս սոցիալական պաշտպանության ապահովման ուղղությամբ առաջացած անհատական կարիքները բավարարելու նպատակով.

բ. խմբային, որոնք ուղղակիորեն տրամադրվում են ընդհանուր՝ միևնույն կարիքն ունեցող խմբին միաժամանակ, այդ կարիքները բավարարելու նպատակով.

2) անուղղակի տրամադրվող սոցիալական ծառայություններ, որոնք կրում են ընդհանրական բնույթ և անուղղակիորեն տրամադրվում են նույն կարիքն ունեցող սոցիալական խմբին (թեքահարթակներ, թույլ տեսողների համար հատուկ հրատարկություններ, խոսող գրքեր և այլն).

3. Սոցիալական ծառայություններն ըստ տրամադրման գործընթացի կազմակերպման մեխանիզմների դասակարգվում են.

1) սոցիալ-վարչարարական ծառայություններ, որոնց տրամադրման պայմաններն ու կարգը, անհրաժեշտ փաստական հանգամանքները (տեղեկությունների ցանկ և դրանց ձեռք բերման մեխանիզմներ) սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և դրանց տրամադրման համար ընդունվում է վարչական ակտ.

2) ընդհանուր մասնագիտական ծառայություններ, որոնց տրամադրման համար պահանջվում է ընդհանուր մասնագիտական մեթոդների կիրառում և միտված են սոցիալական աջակցություն ստացողի իրավունքների իրականացման ապահովմանը կամ պաշտպանությանը կամ ունեն կանխարգելիչ բնույթ.

3) հատուկ (նեղ մասնագիտական) սոցիալական ծառայություններ, որոնց տրամադրումը պահանջում է նեղ մասնագիտական մեթոդների կիրառում, ինչպես նաև հատուկ տեխնիկական և այլ պայմանների առկայություն.

4. Նույն սոցիալական ծառայությունը համաձայն սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դասակարգումների կարող է ընդգրկվել սահմանված՝ մեկից ավելի տեսակների մեջ:

5. Սոցիալական ծառայությունների հիմնական տեսակները, դրանց տրամադրման առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:

6. Սոցիալական ծառայությունների այլ տեսակների տրամադրման կարգերը սահմանվում են օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

ՀՈԴՎԱԾ 8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Սոցիալական ծառայությունների հիմնական տեսակներն են՝

- 1) խորհրդատվական օգնության տրամադրումը.
- 2) վերականգնողական օգնության տրամադրումը.
- 3) բնափրային օգնության տրամադրումը.
- 4) կացարանի տրամադրումը.
- 5) խնամքի կազմակերպումը.
- 6) իրավաբանական օգնության տրամադրումը.
- 7) օրենքով սահմանված կենսաթոշակների, նպաստների, դրամական օգնությունների և այլ դրամական վճարների տրամադրումը.
- 8) օրենքով սահմանված զբաղվածության ծառայությունները.
- 9) անհատական սոցիալական ծառայությունների՝ օրենքով չարգելված այլ տեսակներ:

ՀՈԴՎԱԾ 9. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1. Խորհրդատվական օգնությունն ընդհանուր մասնագիտական ծառայություն է, որը տրամադրվում է համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմին դիմած յուրաքանչյուր քաղաքացու իր դիմումում բարձրացված հարցի կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն ստեղծված իրավիճակից դուրս գալու, նրա սոցիալական խնդիրների լուծման ուղիներ և եղանակներ գտնելու միջոցների մասին խորհուրդների և առաջարկությունների, ինչպես նաև համարժեք սոցիալական ծառայություններ ստանալու վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ձևով:

2. Խորհրդատվական օգնությունը կարող է տրամադրվել անհատական կամ խմբային եղանակով:

ՀՈԴՎԱԾ 10. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1. Վերականգնողական օգնությունը հատուկ (նեղ մասնագիտական) սոցիալական ծառայություն է, որը տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն.

- 1) սոցիալ-բժշկական վերականգնման.
- 2) վերականգնողական, տեխնիկական միջոցների և այլ օժանդակ սարքերի.
- 3) սոցիալ-հոգեբանական վերականգնման.
- 4) մասնագիտական վերականգնման.
- 5) աշխատանքային թերապիայի.
- 6) ինչպես նաև օրենքով չարգելված այլ ձևերով:

2. Վերականգնողական օգնության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 11. ԲՆԱՓՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1. Բնափրային օգնությունն ընդհանուր մասնագիտական ծառայություն է, որը տրամադրվում է սննդի կազմակերպման, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների, հատուկ տրանսպորտային միջոցների, հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական և տեխնիկական միջոցների

տրամադրման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով:

2. Բնաիրային օգնության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 12. ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1. Կացարանը տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված.

1) ժամանակավոր կացարանում, հասարակական նշանակության այլ օբյեկտներում բնակվող սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն չունեցող անձին (ընտանիքին)՝ պայմանագրային հիմունքներով մինչև 10 տարի ժամկետով՝ անհատույց, իսկ դրանից հետո վարձակալական հիմունքներով.

2) անօթևանին՝ մինչև 90 օր տևողությամբ.

3) ընտանեկան բռնության կամ մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված քաղաքացիներին՝ մինչև 12 ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1)-ին կետով սահմանված դեպքում կացարանի տրամադրումն սոցիալ-վարչարարական, իսկ 2)-րդ և 3)-րդ կետերով սահմանված դեպքերում՝ հատուկ (նեղ մասնագիտական) սոցիալական ծառայություն է:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2)-րդ և 3)-րդ կետերով սահմանված դեպքերում տրամադրվում են.

1) բնաիրային օգնություն՝ սննդի, հիգիենայի պարագաների, հագուստի, կոշիկի ձևով.

2) բժշկական օգնություն և սպասարկում.

3) սոցիալ-հոգեբանական օգնություն.

4) իրավական խորհրդատվություն.

5) այլ համարժեք սոցիալական ծառայություններ՝ ըստ անհրաժեշտության կազմակերպվում են մասնագիտական կազմակերպություններում (հանրակրթական, մասնագիտացված բժշկական հաստատություն և այլն):

4. Կացարանի տրամադրման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 13. ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1. Խնամքի տրամադրումը հատուկ (նեղ մասնագիտական) սոցիալական ծառայություն է, որը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին, կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև հիվանդության (ոչ բարենպաստ ելքի կանխատեսումով) վերջին շրջանում գտնվող անձին և նրա ընտանիքին՝ ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններն ապահովելու կամ ձեր, հաշմանդամություն ունեցող, հիվանդ քաղաքացիներին իրենց հարազատ սոցիալական միջավայրում հնարավորինս երկար պահելու կամ հասարակություն ներառման նպատակով անհրաժեշտ օգնությունն է:

2. Խնամքը տրամադրվում է սննդի, այդ թվում՝ դիետիկ, բժշկական, սանիտարահիգիենիկ սպասարկման, հագուստի, կոշիկի և առաջին

անհրաժեշտության այլ պարագաների տրամադրման, սոցիալ-հոգեբանական, մշակութային, կրթական, ժամանցի, անհրաժեշտության դեպքում՝ սոցիալական աջակցություն ստացողների բժշկական շարունակական հսկողության և հիվանդանոցային բուժման, իրավական օգնության և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով:

3. Հիվանդության (ոչ բարենպաստ ելքի կանխատեսումով) վերջին շրջանում գտնվող քաղաքացուն կյանքի վերջին ամիսների, օրերի ընթացքում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նրա ընտանիքի անդամներին տրամադրվում է պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնություն, որը.

1) ակտիվ ամենկողմյա արհեստավարժ բժշկական օգնություն է այն քաղաքացիներին, որոնց մոտ առկա է հիվանդությունների առաջընթաց, դրանց զարգացման վերջին փուլում՝ ցավի և մյուս բացասական ախտանիշների վերացման, ինչպես նաև հոգեբանական, սոցիալական և հոգևոր աջակցության տրամադրման նպատակով, որը հիվանդության վերջնական փուլում գտնվող արագ զարգացող հիվանդություններով տառապող անձանց օգնում է հասնելու կյանքի լավագույն որակի մինչև մահը և ուղղված չէ մահվան գալու ոչ կրճատմանը և ոչ երկարացմանը.

2) ընդգրկում է հետևյալ հիմնական կողմերը.

ա. հիվանդության ախտանիշների կառավարում.

բ. հոգեբանական, հոգևոր և հուզական աջակցություն.

գ. աջակցություն ընտանիքի համար.

դ. կորստի շրջանի աջակցություն

3) տրամադրվում է հոսպիտում կամ տնային պայմաններում:

4. Խնամքը տրամադրվում է.

1) տնային պայմաններում.

2) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում.

3) սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում.

4) հիվանդանոցային բժշկական կազմակերպություններում.

5) հոսպիտումներում:

5. Տնային պայմաններում խնամքը տրամադրվում է դրա կարիքն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց, չաշխատող (բացառությամբ տնային պայմաններում աշխատող) քաղաքացիներին և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց՝ նրանց անհատական սոցիալական ծրագրի համաձայն՝ հիմնականում սոցիալական ծառայությունների հետևյալ ձևերով.

1) կենցաղային սպասարկում.

2) բժշկական օգնություն և սպասարկում.

3) սոցիալ-հոգեբանական օգնություն.

4) իրավաբանական խորհրդատվություն:

6. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունն ապահովում է երկարաժամկետ կացարան, շուրջօրյա լրիվ խնամք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց, հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները լինում են.

1) ընդհանուր տիպի՝ ծերերի և հաշմանդամություն ունեցող անձանց կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար.

2) հատուկ (մասնագիտացված)՝ քրոնիկ հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց համար:

7. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը բնակիչներին տրամադրում է.

1) անհրաժեշտ կահույք.

2) հագուստ, սպիտակեղեն, կոշիկեղեն՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան.

3) անկողնային պարագաներ.

4) անձնական հիգիենայի պարագաներ:

8. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կազմակերպում է բնակիչների՝

1) սննդի.

2) առաջնային բուժօգնության տրամադրումը.

3) սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրումը.

4) իրավական խորհրդատվության տրամադրումը.

5) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովումը.

6) բժշկասոցիալական փորձաքննությունը.

7) ստացիոնար բժշկական կազմակերպություն ուղեգրելը.

8) ազատ ժամանցը.

9) կրթաուսումնական կամ ուսումնադաստիարակչական ծառայությունները.

10) աշխատանքային թերապիան:

9. Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնը խնամքը տրամադրում է կենտրոնում ցերեկային ժամերին՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց, հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին, ինչպես նաև երեխաներին՝ հիմնականում հետևյալ սոցիալական ծառայությունների ձևով՝

1) սնունդ՝ օրական մեկ անգամ.

2) առաջնային բուժօգնություն

3) սոցիալ-հոգեբանական օգնություն.

4) իրավաբանական խորհրդատվություն.

5) կրթաուսումնական կամ ուսումնադաստիարակչական ծառայություններ.

6) հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքային վերկանազմման անհատական ծրագրի կազմում, դրանով նախատեսված միջոցառումների իրականացում.

7) մասնագիտական կոմնորոշում.

8) արվեստի միջոցով թերապիա(арттерапия).

9) օկուպացիոն թերապիա (лечение занятием, շտկիչ վարժանքներով թերապիա).

10) աշխատանքային թերապիայի կազմակերպում:

10. Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնը կազմակերպում է սոցիալական աջակցություն ստացողների ժամանցը, ինչպես նաև մշակութային միջոցառումներ:

11. Հաշմանդամություն ունեցող չափահաս և գործունակ անձի հասարակական կյանքում լիարժեք գործունեության ապահովման, այդ թվում աշխատանքի իրավունքի իրականացման համար, առանձնահատուկ պահանջների առկայության դեպքում կարող է տրամադրվել սոցիալական պատրոնաժ:

12. Խնամքի տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 14. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1. Իրավաբանական օգնությունը հատուկ (նեղ մասնագիտական) սոցիալական ծառայություն է, որը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպության իրավասությունների շրջանակում տրամադրվող իրավաբանական խորհրդատվություն է, ինչպես նաև նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով փաստաբանական օգնության կազմակերպումը:

ԳԼՈՒԽ 3

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 15. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) սահմանում է սոցիալական աջակցության քաղաքականության հիմնական ուղղությունները.

2) իրականացնում է միասնական պետական քաղաքականությունը.

3) սահմանում է պետական ծախսերի ծրագիրը.

4) հաստատում է սոցիալական ծառայությունների տրամադրման կարգերը:

ՀՈԴՎԱԾ 16. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորած պետական մարմին)՝

1) մշակում և իրականացնում է սոցիալական աջակցության բնագավառի միասնական պետական քաղաքականությունը.

2) ներկայացնում է առաջարկություններ՝ սոցիալական աջակցության զարգացման ուղղությունների և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին.

3) հաստատում է համալիր կետրոններում տեղակայված՝ լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինների օրինակելի կանոնադրությունը և իրականացնում է մեթոդական ղեկավարումը.

4) հաստատում է սոցիալական աշխատանքի մասնագետների պաշտոնային բնութագրերը, տվյալ պաշտոնը զբաղեցնողի պաշտոնային պարտականությունները, գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները, որակավորման պահանջները.

5) կազմակերպում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտացման դասընթացներ, ինչպես նաև սոցիալական աշխատանքի մասնագետների որակավորման բարձրացման դասընթացներ.

6) հաստատում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտական դասընթացների «Սոցիալական աշխատանքի» մասնագետների որակավորման վկայականների օրինակելի ձևաթուղթը.

7) սահմանված կարգով մասնակցում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտության պետական կրթական չափորոշիչի ձևավորմանը.

8) հաստատում է սոցիալական աշխատանքի մասնագետների էթիկայի կանոնները, տնային այցելություն կատարելու, սոցիալական դեպքի վարման, տեղական սոցիալական ծրագրերի մշակման մեթոդական ցուցումները, սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված սոցիալական համագործակցության համաձայնագրի օրինակելի ձևը և դրա ընդունման ընթացակարգը.

9) պետական վերահսկողություն է իրականացնում սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմիններում, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններում.

10) ստուգում է այլ մարմիններից և կազմակերպություններից (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) տրված սոցիալական աջակցության տրամադրման համար իրավունքը հաստատող փաստաթղթ(եր)ի հավաստիությունը.

11) տրամադրվող սոցիալական ծառայությունը սույն օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝

ա. պահանջում է տեղեկատվություն՝ համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմիններից տրամադրվող սոցիալական ծառայությունը սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ.

բ. պահանջ է ներկայացնում համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմիններին՝ սահմանված ժամկետում վերացնելու հայտնաբերված անհամապատասխանությունը,

գ. համապատասխան սոցիալական աշխատանքի մասնագետին ենթարկում է օրենքով սահմանված պատասխանատվության կամ դիմում է համապատասխան տարածքային մարմնի վերադասին՝ համապատասխան սոցիալական աշխատանքի մասնագետին օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ .

12) հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի և իրավունքների պաշտպանությամբ նրա դիմելու դեպքում կամ իր նախաձեռնությամբ.

13) սահմանում է սոցիալական ծառայությունների որակի վերահսկման հետադարձ կապի մեխանիզմները.

14) ստեղծում և վարում է սոցիալական ծառայություն ստանալու համար դիմած քաղաքացիների, սոցիալական աջակցություն ստացողների (անհատական տվյալների տեղեկատվական բազա), սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ռեգիստր:

15) ուսումնասիրում է համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինների և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների հետ կապված բողոքները, խախտումներ հայտնաբերելու դեպքում ձեռնարկում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված միջոցառումներ դրանք վերացնելու ուղղությամբ:

ՀՈԴՎԱԾ 17. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարածքային կառավարման պետական մարմինն իր իրավասությունների շրջանակում՝

1) իրականացնում է մարզի (Երևան քաղաքի) սոցիալական աջակցության պետական ծրագրերը:

2) համակարգում և իրականացնում է մարզի (Երևան քաղաքի) սոցիալական աջակցության ծրագրերը:

3) աջակցում է սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին մարզում (Երևան քաղաքում) սոցիալական աջակցության ծրագիր իրականացնելիս:

ՀՈԴՎԱԾ 18. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Տեղական ինքնակառավարման մարմինը սոցիալական ծառայություններ է տրամադրում՝

1) պետության պատվիրակած լիազորությունների շրջանակներում:

2) սոցիալական աջակցության համայնքային ծրագրերի շրջանակներում:

3) կամավոր լիազորությունների շրջանակներում:

2. Համայնքի ղեկավարը համագործակցում է աջակցող ցանցի հետ:

3. Համայնքի ղեկավարն աջակցում է սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացմանը դրանց հասցեականության մեծացման հարցում՝ հայտնաբերելով համայնքի առավել աղքատ, ինչպես նաև աջակցության ծրագրերում ընդգրկված ոչ աղքատ ընտանիքներին:

4. Համայնքի ղեկավարն իր աշխատակազմի ուժերով կամ աջակցող ցանցի հետ համատեղ կազմակերպում է տնային այցելություններ և հնարավորության դեպքում լուծում տալիս տվյալ ընտանիքի կամ քաղաքացու սոցիալական խնդիրներին:

5. Համայնքի ղեկավարը՝ համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմնի մասնագիտական աջակցությամբ, կազմակերպում է համայնքի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացը:

ՀՈԴՎԱԾ 19. ՀԱՄԱԼԻՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմին(ներ)ը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում է, վերահաշվարկում, կասեցնում և դադարեցնում պետական կենսաթոշակների, նպաստների, պատվովճարի, պարգևավճարի, դրամական օգնության և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարները.

2) կազմակերպում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դրամական վճարի նշանակումից հետո դրանց վճարումը՝ վճարման ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով.

3) ձևավորում է և վարում սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դրամական վճարների համակարգերի տվյալների շտեմարանները.

4) գնահատում է սոցիալական աջակցություն ստացողների սոցիալական կարիքները, կազմում անհատական ծրագիրը (սահմանում տրամադրման ենթակա ծառայությունների համալիրը), ինչպես նաև ապահովում է անհատական ծրագրի իրականացումը և շարունակական հսկողությունը.

5) տրամադրում է ինտեգրված սոցիալական ծառայություններ.

6) անհատական ծրագրի շրջանակներում համակարգում է սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը.

7) տրամադրում է որոշակի սոցիալ-վարչարարական սոցիալական ծառայություններ կամ կազմակերպում է դրանց տրամադրումը.

8) տրամադրում է որոշակի ընդհանուր սոցիալական ծառայություններ կամ կազմակերպում է դրանց տրամադրումը.

9) տրամադրում է որոշակի հատուկ (ներկ մասնագիտական) սոցիալական ծառայություններ կամ կազմակերպում է դրանց տրամադրումը.

10) ուղղորդում է հատուկ (ներկ մասնագիտական) սոցիալական ծառայություններ տրամադրող հաստատություններ.

11) ձևավորում է և վարում սույն հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետով նախատեսված լիազորության շրջանակներում հավաքագրված տվյալների տեղեկատվական բազան.

12) տալիս է եզրակացություն խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի տեղավորման (որդեգրում, խնամակալություն, խնամատարություն կամ ուղեգրում բնակչության սոցիալական պաշպանության հաստատություն) մասին.

13) տալիս է նախնական նույնացման մասին եզրակացություն սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով սահմանված դեպքում՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությանը.

14) մասնակցում է մարզի, իր սպասարկման տարածքի համայնքների տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին.

15) իրականացնում է աշխատուժի արտաքին և ներքին տեղաշարժի կարգավորմանն ուղղված ծրագրեր, աշխատանք փնտրող անձանց օժանդակում՝

ընտրելու հարմար աշխատանք, իսկ գործատուներին՝ ապահովելու անհրաժեշտ մասնագիտություն և որակավորում ունեցող մասնագետներով.

16) հաշվառում է աշխատանք փնտրող անձանց, տրամադրում մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ խորհրդատվություն.

17) հաշվառում է գործազուրկներին, օրենքով սահմանված հիմքերի դեպքում աշխատաշուկայում ճանաչում անմրցունակ,

18) ընդգրկում է աշխատանք փնտրող անձանց զբաղվածության ակտիվ ծրագրերում.

19) ճանաչում է անձին հաշմանդամ, սահմանում հաշմանդամության խումբը, դրա պատճառական կապը, տևողությունը.

20) կազմում է հաշմանդամություն ունեցող անձի անհատական վերականգնողական ծրագիրը, որոշում բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնողական միջոցառումների տեսակներն, ծավալները և ժամկետները.

21) խորհրդատվություն և եզրակացություն է տրամադրում համապատասխան տարածքային մարմիններին կամ կազմակերպություններին հաշմանդամություն ունեցող անձին բուժվերականգնողական, մասնագիտական կողմնորոշման, որոշակի աշխատանքի ցուցված կամ հակացուցված լինելու, ուսման, վերաորակավորման, տնային սպասարկման անհրաժեշտության և այլ հարցերի վերաբերյալ.

22) աջակցում է դիմողին բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների իրականացմանը.

23) աջակցում է երեխայի նախադպրոցական կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը.

24) աջակցում է երեխայի կրթության իրավունքի իրականացմանը.

25) աջակցում է երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծմանը.

26) ապահովում է քաղաքացիների համար սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ, սոցիալական աջակցության մատչելիություն և համարժեքություն սոցիալական աջակցություն ստացողների անհատական կարիքներին.

27) հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի և իրավունքների պաշտպանությամբ նրա դիմելու դեպքում կամ իր նախաձեռնությամբ.

28) համագործակցում է աջակցող ցանցի հետ.

29) կազմակերպում է աջակցող ցանցի սոցիալական համագործակցության համաձայնագրի ընդունման գործընթացը.

30) ընդունում է քաղաքացիների դիմումները՝ մեկ պատուհանի սկզբունքով, ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստաթղթաշրջանառությունը.

31) կատարում է քաղաքացիների ընդունելություն, տրամադրելով քաղաքացիներին անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն.

31) սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստանում է առցանց, ինքնաշխատ եղանակով և կիրառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

33) իրականացնում է սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 23-26-րդ կետերով սահմանված պարտականություններն իրականացվում են միջգերատեսչական սոցիալական համագործակցության արձանագրություններով նախատեսված ընթացակարգով:

ՀՈԴՎԱԾ 20. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐԸ

1. Սոցիալական աջակցության տեղեկատվական բազաները ստեղծվում են սոցիալական աջակցություն ստանալու համար դիմելու դեպքում, անհատական սոցիալական ծառայության տվյալ տեսակի իրավունքի համար անհրաժեշտ տվյալներն՝ առցանց ինքնաշխատ ստանալու եղանակով կամ դրա անհնարինության դեպքում դիմողի ներկայացրած փաստաթղթերում ներառված տվյալներով:

2. Սոցիալական աջակցության տեղեկատվական բազաները ստեղծվում են.

1) սոցիալական աջակցության չափերի, հեռանկարային զարգացման ուղղությունների, դրանց ֆինանսավորման հնարավոր միջոցների կանխատեսման.

2) անհատական սոցիալական ծառայությունների տեսակների տրամադրման գործընթացի համակարգման նպատակով:

3. Սոցիալական աջակցության տեղեկատվական բազան պարունակում է սոցիալական ծառայություններ ստանալու համար դիմած քաղաքացիների անհատական տվյալները, սոցիալական ծառայությունը ստանալու հիմքը կամ մերժելու պատճառը, ստանալու ժամկետները, դրա պարբերականությունը, սոցիալական ծառայության չափը, տրամադրման և դադարեցման ժամկետները:

4. Համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինները և սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունները պարտավոր են սոցիալական ծառայություններ տրամադրելու մասին տվյալներ ներկայացնել լիազորած պետական մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում:

ՀՈԴՎԱԾ 21. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. Սոցիալական աջակցության ֆինանսավորումն իրականացվում է՝

1) պետական բյուջեի միջոցներից.

2) համայնքի բյուջեի միջոցներից.

3) իրավաբանական և ֆիզիկական անձանց նվիրաբերումներից և նվիրատվություններից.

4) սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայություններից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին:

ՀՈԴՎԱԾ 22. ԼԻԱԶՈՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՀԱՄԱԼԻՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

1. Սոցիալական աջակցության պետական քաղաքականություն իրականացնելիս լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինները համագործակցում են սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների հետ:

2. Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպություններ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում տեղեկատվություն են փոխանակում սոցիալական աջակցություն ստացողների և իրենց տրամադրած սոցիալական ծառայությունների մասին:

3. Լիազորած պետական մարմնի, տարածքային կառավարման պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինների, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունները համագործակցում են այդ նպատակով ընդունված սոցիալական համագործակցության համաձայնագրի (այսուհետ՝ համաձայնագիր) շրջանակներում:

ՀՈԴՎԱԾ 23. ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1. Տեղական սոցիալական ծրագիրը կազմվում է տարածքային առանձնահատկությունների, տարածքում առկա խնդիրների հաշվառմամբ՝ կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքով՝ համայնք(ներ)ի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա:

2. Տեղական սոցիալական ծրագիրը մշակվում է տեղական ինքնակառավարման մարմնի կողմից՝ համալիր կենտրոնում տեղակայված տարածքային մարմնի սոցիալական աշխատող-դեպք վարողի մասնագիտական աջակցությամբ՝ գործընթացին մասնակից դարձնելով համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչությանը:

3. Տեղական սոցիալական ծրագիրը կարող է կազմվել մեկ համայնքի կամ մեկից ավելի համայնքների կողմից համատեղ՝ ընդհանուր խնդիրների լուծման և ընդհանրական սոցիալական կարիքների բավարարման նպատակով:

4. Տեղական սոցիալական ծրագրերն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի կամ պայմանագրային հիմունքներով համայնքում գործող աջակցող ցանցի մասնակցի կողմից:

5. Տեղական սոցիալական ծրագրերը կարող են ֆինանսավորվել.

1) համայնքի բյուջեի միջոցներից.

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց նվիրաբերումներից և նվիրատվություններից.

3) սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայություններից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին:

6. Տեղական սոցիալական ծրագրերի շրջանակներում սոցիալական ծառայությունները տրամադրվում են սույն օրենքով սահմանված սկզբունքների համաձայն ավագանու հաստատած կարգով՝ սոցիալական աջակցություն ստացողի անհատական ծրագրին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 24. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

1. Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում աջակցող ցանցի մասնակից սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև բարեգործ և(կամ) կամավոր անհատ քաղաքացիները (այսուհետ՝ աջակցող ցանցի մասնակից) համաձայնագրին միանում են կամավոր հիմունքներով:

2. Համագործակցության համաձայնագրի ընդունումը կազմակերպում է համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինը:

3. Համագործակցության համաձայնագրին իր մեջ ներառում է համագործակցության նպատակներն ու սկզբունքները, կողմերի պարտավորությունները, համակարգող խորհրդի ձևավորման, ինչպես նաև պարտավորությունների կատարման հսկողության և դրանց չկատարման դեպքում՝ համապատասխան միջոցառումների իրականացման մեխանիզմները:

4. Համագործակցության հիմնական նպատակներն են.

1) պաշտպանել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերը կամ կանխարգելել նրանց նման իրավիճակում հայտնվելը.

2) բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և կողմնորոշումը դեպի սոցիալական աջակցություն ստացողները, բարելավել դրանց որակը, ամրապնդել սոցիալական համախմբվածությունը՝ նվազեցնելով խոցելի խմբերի սոցիալական մեկուսացվածությունը.

3) ձևավորել վստահության մթնոլորտ.

4) մեծացնել սոցիալական դեպքի վարման գործընթացի արդյունավետությունը.

5) ստեղծել արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալական աջակցություն ստացողի խնդիրներին արագ արձագանքման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների անհապաղ տրամադրման հնարավորություններ.

6) նվազեցնել աղքատ, սոցիալապես անապահով, ինչպես նաև մեկուսացված խմբերի տնտեսական և սոցիալական խոցելիությունը:

5. Համագործակցության հիմնական սկզբունքները՝ համակառավարումը, հավասար պատասխանատվությունը, թափանցիկության ապահովումը և ժողովրդավարությունն են:

6. Աջակցող ցանցի մասնակիցների հիմնական իրավունքներն են.

1) ստանալ տեղեկատվություն աջակցող ցանցի մյուս մասնակիցներից՝ իրենց կողմից իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին.

2) ակնկալել անհապաղ աջակցություն աջակցող ցանցի մասնակիցներից՝ իրենց հնարավորությունների շրջանակում, սույն հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված դեպքերում.

3) առաջարկություններ ներկայացնել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման նպատակով:

7. Աջակցող ցանցի մասնակիցների հիմնական պարտականություններն են.

1) իրազեկել աջակցող ցանցի մյուս մասնակիցներին իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին.

2) արագ արձագանքել սույն հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով նախատեսված դեպքերին՝ իր հնարավորությունների շրջանակներում.

3) մասնակցել համայնքների սոցիալական կարիքների վերհանման, ինչպես նաև դրանց համարժեք՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին.

4) առաջարկություններ ներկայացնել աջակցող ցանցի մասնակիցներին՝ անհատական սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի հայեցողական լիազորությունների շրջանակներում որոշումների կայացման համար:

8. Համագործակցության համաձայնագրում կարող են ներառվել սույն օրենքով սահմանված նպատակներին և սկզբունքներին չհակասող այլ նպատակներ, սկզբունքներ, իրավունքներ և պարտականություններ:

ՀՈԴՎԱԾ 25. ՄԻՋԳԵՐԱՏԵՍԶԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Միջգերատեսչական սոցիալական համագործակցությունն իրականացվում է սոցիալական աջակցություն ստացողին սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինների, առողջապահական, կրթաուսումնական, ուսումնադաստիարակչական կազմակերպությունների, ոստիկանության տեղամասային տեսուչների (այսուհետ՝ կողմեր) միջև:

2. Միջգերատեսչական սոցիալական համագործակցությունն իրականացվում է համապատասխան գերատեսչությունների ղեկավարների միջև կազմված արձանագրությունների (պրոտոկոլ, ռեզլամենտ) համաձայն:

3. Միջգերատեսչական սոցիալական համագործակցության արձանագրություններում սահմանվում են.

1) խնդրահարույց այն դեպքերը, որոնք կարող են նախանշել քաղաքացու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված լինելը կամ հայտնվելու հնարավորությունը, որոնց հայտնաբերման ժամանակ կողմերը պարտավորվում են տեղեկացնել համապատասխան տարածքային մարմնին.

2) պահանջները՝ տեղեկատվության ծավալի, ձևի տրամադրման ժամկետի մասին.

3) ըստ դեպքերի՝ տեղեկատվություն ստացող մարմնի անվանումը (մարմինների ցանկը):

ԳԼՈՒԽ 4
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 26. ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼԸ

1. Պետական ծրագրերի շրջանակներում սոցիալական աջակցություն տրամադրվում է դիմողի կամ նրա օրինական ներկայացուցչի (այսուհետ՝ դիմող)՝ սոցիալական աջակցություն տրամադրելու մասին դիմողի համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմին ներկայացրած գրավոր դիմումի և սոցիալական ծառայության տվյալ տեսակի համար անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա, որոնց ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նշված փաստաթղթերը չեն պահանջվում, եթե դրանք ներառված են համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական բազաներում:

3. Սոցիալական աջակցության տրամադրումը մերժվում է՝

1) սոցիալական ծառայության տվյալ տեսակի համար օրենքով սահմանված բավարար հիմք(եր)ի բացակայության.

2) սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դիմողի կողմից անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը (տվյալները) չներկայացնելու.

3) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմողի կողմից ոչ հավաստի տեղեկություններ ներկայացվելու դեպքերում:

4. Սոցիալական աջակցություն տրամադրելու կամ սոցիալական աջակցության տրամադրումը մերժելու մասին որոշումն ընդունում է համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինը:

ՀՈԴՎԱԾ 27. ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը կազմակերպում է համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինը՝ դրանում ներառելով աջակցող ցանցի մասնակիցներին:

2. Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումն ապահովվում է սոցիալական դեպքի վարման եղանակով:

3. Սոցիալական աջակցություն ստացողին ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը կազմակերպում է սոցիալական աշխատող՝ դեպք վարողը՝ անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման միջոցով:

ՀՈԴՎԱԾ 28. ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված սոցիալական աջակցություն տրամադրելու կամ այն մերժելու մասին որոշումը համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինը կայացնում է դիմումը ստանալուց հետո ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում, որի մասին գրավոր տեղեկացնում է դիմողին:

2. Համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինը սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում ընդունելու համար լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության դեպքում դիմողին սույն հոդվածի առաջին մասում նշված ժամկետում տեղեկացնում է լրացուցիչ ուսումնասիրություններ անցկացնելու անհրաժեշտության մասին: Դիմողին վերջնական պատասխան տրվում է ոչ ուշ, քան դիմելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

3. Համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինը սոցիալական աջակցություն տրամադրելը մերժելու մասին որոշման մեջ նշում է մերժման հիմք(եր)ը:

4. Արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, կյանքի դժվարին իրավիճակներում սոցիալական աջակցությունը համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմնի կողմից տրամադրվում է անհապաղ՝ այդ մասին տեղեկատվություն ստանալուց հետո:

5. Համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմնի ընդունած որոշումը, գործողությունը կամ անգործությունը քաղաքացին կարող է բողոքարկել տարածքային մարմնին, դրա վերահաս մարմնին, լիազորած պետական մարմնին և (կամ) դատարան:

ՀՈԴՎԱԾ 29. ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

1. Պետական ծրագրերի շրջանակներում սոցիալական աջակցության տրամադրումը դադարեցվում է՝

1) սոցիալական աջակցություն ստանալու հիմքերի վերացման դեպքում.

2) սոցիալական աջակցություն ստացողի կողմից ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու դեպքերում.

3) սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական աջակցություն ստանալուց հրաժարվելու դեպքում, բացառությամբ սույն օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված դեպքերի.

4) սոցիալական աջակցություն ստացողի մահվան դեպքում:

**ՀՈԴՎԱԾ 30. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱՄԱԴՐՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ**

1. Կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք սոցիալական աջակցությունը տրամադրում են սույն օրենքով սահմանված նպատակներին և սկզբունքներին համապատասխան:

2. Սոցիալական աջակցության տրամադրումը՝

1) չի կարող ուղեկցվել քաղաքական կամ կրոնական քարոզչությամբ.

2) չի կարող հետապնդել տրամադրված սոցիալական ծառայությունների դիմաց այլ ծառայություններ կամ որևէ փոխհատուցում ստանալու ակնկալիք.

3) չի կարող վնաս պատճառել սոցիալական աջակցություն ստացողի առողջությանը, կյանքին և գույքին:

3. Սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված կազմակերպությունների, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող անձի գործողությունները կամ անգործությունը քաղաքացին կարող է բողոքարկել լիազորած պետական մարմին և (կամ) դատարան:

ԳԼՈՒԽ 5

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀՈԴՎԱԾ 31. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Սոցիալական աջակցություն ստացողն իրավունք ունի՝

1) ստանալու տեղեկատվություն իր սոցիալական իրավունքների, դրանց իրացման պայմանների, կարգի և տվյալ սոցիալական խնդիրը լուծելու եղանակների մասին.

2) պահանջելու և ստանալու սույն օրենքում նշված սոցիալական ծառայությունները տվյալ սոցիալական ծառայության համար օրենքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում.

3) ստանալու իր կյանքի և առողջության համար անվտանգ սոցիալական ծառայություններ.

4) սոցիալական ծառայության տրամադրման մերժման դեպքում ստանալու գրավոր պատասխան.

5) մասնակցելու սոցիալական ծառայություն ստանալու վերաբերյալ որոշման ընդունման գործընթացին.

6) հրաժարվելու տրամադրվող սոցիալական ծառայություններից, բացառությամբ սույն օրենքի 33-րդ հոդվածով սահմանված դեպքերի.

7) իր իրավունքների խախտման դեպքում բողոքարկելու օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀՈԴՎԱԾ 32. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Սոցիալական աջակցություն ստացողը պարտավոր է՝

- 1) մասնակցել իր սոցիալական խնդիրների լուծմանը.
- 2) տրամադրել անհրաժեշտ և հավաստի տվյալներ.
- 3) լինել ակտիվ իր սոցիալական հմտությունների զարգացման հարցում.
- 4) չխոչընդոտել սույն օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 37-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետերով և 38-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սոցիալական աշխատանքի մասնագետների կողմից իրականացվող տնային այցելություններին.
- 5) սոցիալական աջակցությունն օգտագործել նպատակային:

ՀՈԴՎԱԾ 33. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒՑ ԿԱՄ ԴՐԱՆՑԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Սոցիալական ծառայություններ ստանալուց հրաժարվելու՝ սոցիալական աջակցություն ստացողի իրավունքի սահմանափակում թույլատրվում է առանց քաղաքացու համաձայնության՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու միջոցով, եթե նա իր հարազատներից ու օրինական ներկայացուցչից չի ստանում անհրաժեշտ խնամք և ուշադրություն՝

- 1) իր հիմնական պահանջմունքները (ինքնասպասարկման և (կամ) ակտիվ տեղաշարժվելու ունակության կորուստ) ինքնուրույն բավարարելու անկարողության,
- 2) օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչվելու դեպքերում:

2. Քաղաքացուն, առանց նրա կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերով, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու որոշումը կայացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմնի եզրակացության հիման վրա:

3. Սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված խնամքի տրամադրումը քաղաքացուն կարող է մերժվել, եթե նա քրոնիկ ալկոհոլամոլ և (կամ) թմրամոլ է, վարակակիր է, տառապում է այնպիսի հիվանդություններով, որոնց բուժումը հնարավոր է միայն հատուկ մասնագիտացված բժշկական հաստատություններում: Հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված հիմքերով սոցիալական ծառայության տրամադրման մերժումը համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմինն ընդունում է համապատասխան մասնագիտացված բժշկական հաստատության եզրակացության հիման վրա:

ԳԼՈՒԽ 6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 34. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Սոցիալական աշխատանքը մարդու անհատական սոցիալական կարիքների բավարարման նպատակով սոցիալական աշխատանքի, ինչպես նաև հոգեբանական և մանկավարժական մեթոդների ու եղանակների կիրառման միջոցով

իրականացվող մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է մարդու (անձամբ այն իրականացնելու անկարողության դեպքում) կյանքի դժվարին իրավիճակը հաղթահարելուն կամ կանխարգելելուն՝ մարդուն, ընտանիքին, անձանց խմբին անհատական օգնություն ցուցաբերելու միջոցով՝ սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

2. Սոցիալական աշխատանքի մասնագետներն են սոցիալական աշխատողն ու սոցիալական սպասարկողը:

ՀՈԴՎԱԾ 35. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԵՏԸ

1. Սոցիալական աշխատողը «Սոցիալական աշխատանքի» բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող և սոցիալական աշխատողի մասնագիտական գործունեություն իրականացնող քաղաքացին է:

2. Սոցիալական աշխատող կարող է լինել նաև այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներ ավարտած, համապատասխան փաստաթուղթ ստացած քաղաքացին, որն ունի սոցիալական ոլորտի աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ:

3. Սոցիալական սպասարկողը «Սոցիալական աշխատանքի» միջին կամ նախնական մասնագիտական կրթություն ունեցող և սոցիալական սպասարկողի մասնագիտական գործունեություն իրականացնող քաղաքացին է:

4. Սոցիալական սպասարկող կարող է լինել նաև այլ միջին մասնագիտական կրթություն ունեցող և (կամ) «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացներ ավարտած, համապատասխան փաստաթուղթ ստացած քաղաքացին:

ՀՈԴՎԱԾ 36. ՀԱՄԱԼԻՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմնի սոցիալական աշխատանքի մասնագետները քաղաքացիական կամ համայնքային ծառայողներ են (այսուհետ՝ ծառայող):

2. Համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմիններում սոցիալական աշխատանքի մասնագետները հիմնականում հետևյալներն են.

1) վարչարար.

2) սոցիալական դեպք վարող

3) սոցիալական սպասարկող:

3. Սոցիալական դեպք վարողը և սոցիալական սպասարկողն իրավունք ունեն.

1) կատարել տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրել սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները.

2) ներկայացնելու առաջարկություն սոցիալական աջակցության ծրագրերի ձևավորման և դրանց կատարելագործման վերաբերյալ:

4. Վարչարարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնասիրում է դիմողի ներկայացրած տվյալները (փաստաթղթերը), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության դեպքում տալիս է եզրակացություն վարչական ակտ ընդունելու համար և (կամ) ընդունում վարչական ակտ:

5. Սոցիալական դեպք վարողը.

1) տիրապետում է սոցիալական աջակցություն ստացողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նրա սոցիալական կարիքների գնահատման, այդ կարիքների բավարարմանն ուղղված անհատական ծրագրերի կազմման մեթոդներին ու տեխնիկային, առկա ռեսուրսների և հնարավորությունների մասին տեղեկատվությանը.

2) համագործակցում է աջակցող ցանցի մասնակիցների հետ:

6. Սոցիալական աշխատանքի մասնագետին՝ սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացքում հայտնի դարձած անձնական տվյալները համարվում են մասնագիտական գաղտնիք և այն հրապարակող կամ տարածող սոցիալական աշխատանքի մասնագետը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

7. Սոցիալական դեպք վարողը պարտավոր է.

1) պաշտպանել սոցիալական աջակցություն ստացողի իրավունքներն ու օրինական շահերը.

2) ապահովել սոցիալական աջակցություն ստացողի ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունն իր խնդիրների լուծման գործընթացին, որոշումների կայացմանը՝ զարգացնելով սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական հմտությունները և ինքնիրացումը (ինքնորոշումը).

3) գնահատել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները.

4) կազմել սոցիալական աջակցություն ստացողի անհատական ծրագիրը՝ ներգրավելով աջակցող ցանցի մասնակիցների մասնագետներին.

5) օգտագործել տվյալ տարածաշրջանում առկա աջակցող ցանցը՝ սոցիալական անհատական ծրագրի կազմման և իրականացման նպատակով.

6) համակարգել սոցիալական անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, կազմակերպել խմբային (բազմամասնագիտական) քննարկումներ և ուղղորդել սոցիալական աջակցություն ստացողին տարբեր մասնագիտացված կազմակերպություններ՝ իրենց իրավունքների մասին իրազեկման, ինչպես նաև դրանց իրականացման համար.

7) ստանձնել միջնորդի դեր տարբեր և երբեմն միմյանց հակասող շահեր ունեցող կազմակերպությունների միջև՝ ապահովելով կազմակերպությունների միջև համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև՝ սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի պաշտպանության առաջնային դերի պահպանումը.

8) այլ կազմակերպությունների հետ մշակել նախականխող, կանխարգելող ծրագրեր՝ ուղղված համայնքներում բացահայտված ռիսկային գործոնների

նվազեցմանը, սոցիալական իրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների ձևավորման խթանմանը և պաշտպանությանը.

9) ապահովել քաղաքացիների համար սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ.

10) պահանջել սոցիալական աջակցության համար դիմած քաղաքացուց կամ սոցիալական աջակցություն ստացողից միայն սոցիալական աջակցության տրամադրման հետ կապ ունեցող տեղեկություններ, աջակցել անհրաժեշտ փաստաթղթերի (տվյալների) ճիշտ ներկայացմանը.

11) աջակցել իր սպասարկման տարածքում բնակվող քաղաքացիների (ընտանիքների) սոցիալական աջակցության իրավունքի իրականացման պահանջների կատարմանը և պահպանել սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը.

12) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել սույն հոդվածի տասներորդ մասով նախատեսված վկայականը:

8. Սոցիալական սպասարկողը պարտավոր է՝

1) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացուն օգնել հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

2) միջոցներ ձեռնարկել հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիներին, ընտանիքներին և աջակցել նրանց դիմելու համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմին.

3) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել սույն հոդվածի տասնմեկերորդ մասով նախատեսված վկայականը:

9. Սոցիալական աշխատանքի մասնագետն ունի սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և կրում է պարտականություններ:

10. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքում գործող այլ կազմակերպությունները, անկախ կազմակերպական-իրավական ձևից, պարտավոր են աջակցել սոցիալական աշխատանքի մասնագետին իր ծառայողական պարտականությունները կատարելիս:

11. Սոցիալական աշխատանքի մասնագետն ունի վկայական, որը տալիս է համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմնի վերադասը:

ՀՈԴՎԱԾ 37. ԽՆԱՄՔ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետներն ունեն հետևյալ հիմնական իրավունքները.

1) կատարել տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրելու սոցիալական աջակցություն ստաող անձի ընտանիքի (դրա առկայության դեպքում) սոցիալական և նյութական պայմանները.

2) համագործակցել աջակցող ցանցի անդամ կազմակերպությունների հետ.

3) մասնակցել տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին:

2. Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատողներն ունեն հետևյալ հիմնական պարտականությունները.

1) գնահատել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները և իրականացնել նրա անհատական ծրագրով՝ իր կազմակերպությանը վերապահված իրավասությունների շրջանակներում՝ նախատեսված միջոցառումները, անհատական ծրագրով նախատեսված ժամկետներում մասնակցել խմբային (բազմամասնագիտական) քննարկումներին.

2) մատուցել սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված սոցիալական ծառայությունները սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքին համապատասխան.

3) տեղեկացնել սոցիալական աշխատող՝ դեպք վարողին սոցիալական աջակցություն ստացողի մոտ իրավիճակի ակնկալվող բնականոն փոփոխություններից տարբերվող ընթացք առաջանալու մասին:

3. Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատողն ունի սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և կրում է պարտականություններ:

ՀՈԴՎԱԾ 38. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետը սոցիալական սպասարկողն է, որն իրավունք ունի կատարելու տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրելու սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները:

2. Սոցիալական աշխատանքի մասնագետը պարտավոր է՝

1) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացուն օգնել հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

2) միջոցներ ձեռնարկել հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիներին, ընտանիքներին և աջակցել նրանց դիմելու համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմին.

3) պահպանել իր կողմից սպասարկվող քաղաքացիների (ընտանիքների) սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը.

4) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել սույն հոդվածի հինգերորդ մասով նախատեսված վկայականը:

3. Սոցիալական աշխատանքի մասնագետն ունի սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և պարտականություններ:

4. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքում գործող այլ կազմակերպությունները, անկախ կազմակերպական-իրավական ձևից, պարտավոր են աջակցել սոցիալական աշխատանքի մասնագետին իր ծառայողական պարտականությունները կատարելիս:

5. Սոցիալական աշխատանքի մասնագետն ունի վկայական, որը տալիս է համայնքի ղեկավարը:

ՀՈԴՎԱԾ 39. ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ծառայողների վարձատրությունն իրականացվում է քաղաքացիական ծառայողների վարձատրության նորմեր պարունակող իրավական ակտերին համապատասխան:

2. Ծառայողները պաշտոնեական պարտականությունների պատշաճ և որակով կատարման դեպքում լրացուցիչ վարձատրվում է սույն օրենքի 40-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 40. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴԸ

1. Սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի արդյունավետությունը և որակը բարձրացնելու նպատակով ձևավորվում է սոցիալական պաշտպանության ոլորտի խրախուսման և զարգացման ֆոնդ (այսուհետ՝ ֆոնդ):

2. Ֆոնդը ձևավորվում է՝

1) պետական նպաստ ստացող ընտանիքի կամ քաղաքացու ներկայացրած փաստաթղթերում պետական նպաստի իրավունք տվող կամ պետական նպաստի չափի փոփոխություն առաջացնող ոչ հավաստի տեղեկությունները լիազոր մարմնի կողմից հայտնաբերելու դեպքում ավելի վճարված և վերադարձված կամ բռնագանձված գումարներից տասը տոկոս մասհանումների հաշվին:

2) լիազոր մարմնի կողմից հայտնաբերված՝ սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու կամ կենսաթոշակի չափը փոփոխելուն կամ դրա վճարումը դադարեցնելուն հանգեցնող հանգամանքների մասին չտեղեկացնելու կամ սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) կենսաթոշակառուին ավելի վճարված գումարների դեպքում կենսաթոշակից պահումներից կամ դատական կարգով փաստացի բռնագանձված կենսաթոշակի գումարներից տասը տոկոս մասհանումների հաշվին:

3) սոցիալական ծառայություններ տրամադրող պետական մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների աշխատողների նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում կիրառվող նյութական պատասխանատվության արդյունքում գանձվող գումարների հաշվին:

3. Ֆոնդը ծախսվում է սոցիալական պաշտպանության ոլորտում՝

1) համակարգչային, կապի և տրանսպորտային միջոցների ձեռքբերման ու շահագործման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և նյութատեխնիկական ապահովվածության համար:

2) աշխատողների դրամական պարգևատրման և օգնության համար:

3) շենքերի, շինությունների, աշխատանքային պայմանների բարելավման համար:

4. Ֆոնդի գումարների օգտագործման՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված համապատասխան ուղղությունները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ տարեկան ծախսերի նախահաշվի ձևով:

6. Ֆոնդի միջոցները մուտքագրվում և օգտագործվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ 7 ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 41. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սույն օրենքը խախտողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 42. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ին:

2. Մինչև սոցիալական աջակցության իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը՝ դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-207-Ն օրենքը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈԴՎԱԾ 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 43-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 43. Համայնքի ղեկավարի գործունեությունն աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում

1. Համայնքի ղեկավարն աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը.

1) համայնքի տարածքում կազմակերպում է սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը և սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեությունը:

2. Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.

1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.

2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈԴՎԱԾ 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26 ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 70-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի «3»-րդ կետը «կազմակերպում է» բառից հետո լրացնել «սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը և» բառերը, հանել «, իրականացնում է սոցիալական աջակցության տրամադրման և նպաստների նշանակման աշխատանքներ» բառերը:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

| Իրավական ակտի հիմնավորումը | |
|----------------------------|--|
| 1. | <p><u>Անհրաժեշտությունը</u></p> <p>ՀՀ կառավարության 18.07.2013թ. N 800-Ն որոշման հավելված N 1-ով հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով» նախատեսված է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը» (կետ 89) միջոցառումը:</p> <p>ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» N 952-Ն որոշման 3-րդ կետի 3)-րդ ենթակետով սահմանված է մինչև 2013 թվականի նոյեմբերի 30-ը՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական ներդրումն ապահովող իրավական ակտերի նախագծերը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու պահանջը:</p> |
| 2. | <p><u>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</u></p> <p>«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված են սոցիալական ծառայությունների 7 տեսակ, ինչպես նաև սահմանված է, որ կարող են տրամադրվել նաև օրենքով չարգելված սոցիալական ծառայություններ ևս: ՀՀ կառավարության որոշումներով սոցիալական ծառայություններից յուրաքանչյուրի համար սահմանված է տրամադրման կարգ: ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» N 952-Ն որոշմամբ նախատեսված է դրամական վճարների իրականացման լիազորությունները վերապահել մեկ միասնական մարմնի, դրանցից տարանջատելով սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը, ինչպես նաև ապահովել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող անձին (ընտանիքին)՝ իր սոցիալական խնդիրներին համարժեք տրամադրել սոցիալական ծառայությունների փաթեթ:</p> |
| 3. | <p><u>Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը</u></p> <p>ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի հանրապետության կառավարության ծրագրի 3.4.1 «Սոցիալական քաղաքականությունը» բաժնով նախատեսվել է սոցիալական</p> |

| | |
|----|--|
| | <p>ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման նպատակով ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական և լիարժեք ներդրում՝ սոցիալական համալիր ծառայությունների տրամադրում «Մեկ պատուհանի» սկզբունքով</p> |
| 4. | <p><u>Կարգավորման նպատակը և բնույթը</u></p> <p>«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է համապատասխան դրույթների սահմանում ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման ապահովելու համար:</p> <p>Նշված նախագծի ընդունումով կապահովվի ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրումը՝ բարձրացնելով սոցիալական ծառայությունների որակը և մատչելիությունը: Կհստակեցվեն ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացակարգերը՝ համալիր սոցիալական ծառայությունների կենտրոնների ստեղծման (այդ թվում միասնական ընդունարաններ), դրանց գործունեության, լիազորությունների իրավական հենքի առկայության տեսանկյունից:</p> <p>Օրենքի նախագծով սահմանվում են նաև անհատական սոցիալական ծառայությունների հիմնական տեսակները, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների տեսակները, դրանց կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների հիմնական տեսականին, սոցիալական կազմակերպությունների համագործակցության ցանցի ձևավորման հիմնական նպատակներն ու սկզբունքները, գործունեության մեխանիզմները, միջգերատեսչական համագործակցության ձևերը: Փաթեթով ներկայացվում են նաև ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Նշված երկու օրենքների նախագծերով համապատասխանեցվում են համապատասխանեցնում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների համապատասխան դրույթները՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվող դրույթների հետ:</p> |
| 5. | <p><u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</u></p> <p>Օրենքի նախագծի մշակման աշխատանքներում մասնակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ ոլորտը սպասարկող տեղակալը և նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչությունը</p> |
| 6. | <p><u>Ակնկալվող արդյունքը</u></p> <p>Համալիր սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման իրավական հիմքի առկայություն:</p> |

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեում ծախսերում և եկամուտներում ավելացում կամ նվազեցում չի ակնկալվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման կամ փոփոխությունների կատարման անհրաժեշտություն չկա: